Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 967 - Ա որոշման

«ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԻՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է նպաստել մանկապարտեզ հաճախող երեխաների բազմակողմանի զարգացմանը և հոգեբանական վիճակի բարելավմանը, ինչպես նաև մանկապարտեզի անվտանգության և դիմակա-յության մակարդակի բարձրացմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակն է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից՝ համաձայն Բարեգործության մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի:
3.	Բարեգործը	«Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ, Երևանի Ռոտարի Ակումբ Ինթերնեյշնլ Բարեգորգործական ՀԿ:
4.	Ծրագիրը կատարողը	«Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ, ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դրոյի փ. 22/5, 0069, ՀՎՀՀ՝ 00903591, Երևանի Ռոտարի Ակումբ Ինթերնեյշնլ Բարեգորգործական ՀԿ, ՀՎՀՀ՝ 02708338:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Տավուշի մարզի Բերդ Խոշորացված համայնքի Չինարիի մանկապարտեզում, բնագավառը՝ կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	4,378,800 (չորս միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար) դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Չինարի գյուղի մանկապարտեզը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը կմեկնարկի 2021 թ. նոյեմբերի 13-ին և կավարտվի 2022 փետրվարի 13-ին:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ	Նոյեմբեր ամսվա ընթացքում համապատասխան մանկապարտեզի կարիքներին, ձեռք կբերվեն և կտեղադրվեն խաղային համալիրներ ՝ արժեքը 3,243,800 (երեք միլիոն հինգ հարյուր հազար), հոսանքի գեներատոր՝ արժեքը 700,000 (յոթ հարյուր հազար): Կազմակերպչական ծախսերը կազմում են 435,000 (չորս հարյուր երեսունհինգ հազար) դրամ (145,000 դրամ *3 ամիս * մեկ համակարգող):

	ֆինանսական միջոցների ծավալը	
10.	Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Խաղային համալիրի ձեռքբերում և տեղադրում 3,243,800 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ: Էլեկտրական գեներատորի ձեռքբերում և տեղադրում 700,000 (յոթ հարյուր հազար) դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աշխատավարձ (145,000 դրամ *3 ամիս * մեկ համակարգող) – 435,000 (չորս հարյուր երեսունհինգ հազար) դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը կիրականացվի Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի համայնքապետարանի, Չինարի գյուղի վարչական պատասխանատուի և տեղի մանկապարտեզի հետ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագիրը կլինի նաև Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի մշտադիտարկման ներքո, որին կներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ: Ծրագրի վերաբերյալ Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին կներկայացվեն տեղեկություններ՝ ՀՀ կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ